

ի սպառ...: Եւ թագաւորն Սպանիոս, որ տիրէ արեւմտիցն բոլոր մինչեւ Ենկի Տունեան³ եւ Հրմուզ եւ մինչեւ ի Փոքր Հունդուստան. եւ թագաւորն եւս Ֆռանցու, նաեւ Փափն վասն սակաւ իրիք եւ պատճառաց իրար անկեալ են: Եւ մեծ չիոթ եւ աղմուկ. միթէ սուրբ խաղաղարար Հոգին հաշտեցուցէ զնոսա. ամէն:

Այլ եւ հարաւակողմն չիք խաղաղութիւն, զի Մաճարաց պարոնն Խարաֆլախու եւ Պուզտանաց կամին յիրար զիպել եւ կովիլ:

Բայց եղուկ ու վայ եհաս յարեւելք Հայոց երկրին. քանզի այսմ ամին մեծ բռնաւորն թուրքաց՝ սուլթան Մուրատն խրոխտ եւ դուռոց հպարտն, զնաց ի վերայ Շահ Ալֆին ի պատերազմ ժեՌ տարպայ ձՌ հողով, եւ հասեալ ի Կոնիոն քաղաք, որ է Ղոնեայ, աստմամբ չարին եւ խրատու վատ մեծամեծաց իւրոց՝ աստիկ հրաման եհան ամենայն աշխարհն իւր սուրկունի. Ուռումէլի եւ Անատոլի եւ ամենայն սահմանս իւր, զի Խ տարեն ի վեր եկքն մինչեւ Ի օրն զնաոցեն ի տեղիս իւրեանց՝ առանց ամենայն պատճառաց, ո՛չ սակով, ո՛չ արծաթով եւ ոչ այլով իւրք փրկեսցին. եւ թէ ոք յետ Ի աւուր գացին՝ չարաչար մահուամբ սպանցին եւ զինչան ամենայն յափշտակեսցեն: Որ եւ հասին հրովարտակքն արքայէն ի Ստամպոլ, որպէս ի հնումն Համանայ պղծէ ի յԱրեզ քաղաք եւ յայլն, ուր

³ Նոր Աշխարհ: